«Հաստատում եմ»
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարանի ռեկտոր,
հոգեբ.գ.դ., պրոֆեսոր-[illegible] Ս. Ռ. Գևորգյան

«15» «մայիսի» 2025 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Լիանա Ներսեսի Մարտիրոսյանի «ՀՀ տպագիր և առցանց մամուլը՝ որպես քաղաքական միֆաստեղծման միջավայր (1990-2018)» Ժ.01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Առասպելը՝ որպես ազգամշակութային վաղնջական դրսևորում, ոչ ճշմարտանման պատմություն է, որը, կախված տվյալ հանրույթի սովորույթներից և կրոնական հավատալիքներից, ծառայել է իրականությունը իմաստավորելու, մեկնաբանելու համար՝ ի հակադրություն իրական՝ ռացիոնալ մտածողության: Մարդկության պատմության տարբեր ժամանակաշրջաններում մարդը դավանել է տարբեր բարոյական արժեքներ՝ կերտելով իր ժամանակի «հերոսին» և «հակահերոսին» կամ «ցանկալիին» և «անցանկալիին», ավելի պարզունակ՝ «բարուն» և «չարին»: Այսպիսին է մարդկային էությունը: Արդի ընկալմամբ միֆը՝ առասպելն արդեն ներկայանում է որպես, այսպես կոչված, գաղափարաբանություն, որպես զանգվածային մտածողության վրա ներազդելու գործիք՝ ծառայելով սոցիալ-քաղաքական միֆ-առասպելների տարածմանը, ձևավորելով ազգային ինքնագիտակցություն:

Ատենախոսության երեք գլուխների և ենթագլուխների վերտառություններն արդեն վկայում են, որ կատարվել է բարեխիղճ, հանգամանալի գիտական հետազոտություն՝ հայրենի (Հ. Աբեղյան, Գ. Անանյան, Դ. Պետրոսյան, Զ. Ավետիսյան և այլք) և օտար (Կ. Յունգ, Զ. Ֆրեյդ, Ռ. Բարտ, Ա. Լոսև և այլք) հեղինակների, քննվող ժամանակաշրջանի թերթերի, կայքերի, սոցիալական ցանցերի աղբյուրագիտական հարուստ վկայաբերումներով: Սովորաբար ցանկացած հետազոտություն պետք է լինի ի՞նչ, ինչպե՞ս և ինչո՞ւ

հարցադրումների տիրույթում: Տուրք չտալով ԿԱՐԾԻՔ-ի ներկայացման ավանդական ձևաչափին, երբ կրկին տրվում են գլուխների և ենթագլուխների վերնագրերն ու նրանց համառոտ բովանդակությունը՝ փաստենք, որ ատենախոսը լիարժեք պատասխանել է վերոնշյալ հարցադրումներին:

Ատենախոսության շարադրանքը բավական կառուցիկ է՝ զերծ ավելորդաբանություններից, յուրաքանչյուր գլուխ ավարտվում է հստակ ամփոփմամբ, իսկ Ամփոփումը լիովին արտացոլում է հիմնական շարադրանքը, որը փաստում է ատենախոսի՝ իր ասելիքի խորը իմացության իրողությունը: Խոսքը գրագետ է, ձևակերպումները՝ հստակ, հաճախ լակոնիկ: Ի դեպ, ատենախոսության վերնագրում «միֆաստեղծում» տերմինը ճիշտ է ընտրված, փոխարեն՝ «առասպելաստեղծում». այս դեպքում միֆ-ը չի ընկալվում որպես գրականագիտական տերմին, այլ, լայն առումով, ուռճացված, հնարովի մի բան:

Այժմ՝ «թերացումների» (և ոչ՝ թերությունների) մասին: Նկատվել են շարվածքային որոշ վրիպակներ, լեզվառճական, բառօգտագործման, կետադրական անճշտություններ, ինչպես՝ «....այլև կատարում է քաղաքական **հետհայաց**՝ ընդգծելու» (էջ 73), ճիշտ կլիներ՝ ....կատարում է քաղաքական **հետահայաց** անդրադարձ...., «այն իր մեջ պարունակում է...» (էջ 115), «մեդիադիսկուրս» (էջ 70)՝ մեդիախոսույթ: Նմանատիպ մեղանչումների օրինակները կարելի էր մի քիչ էլ ավելացնել, սակայն դրանք ամենևին չէին ստվերի ատենախոսության գիտական արժեքը:

Եզրակացություն

Լիանա Ներսեսի Մարտիրոսյանի «ՀՀ տպագիր և առցանց մամուլը՝ որպես քաղաքական միֆաստեղծման միջավայր (1990-2018)» Ժ.01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունն ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, ունի կարևոր տեսական-կիրառական նշանակություն, գործնականորեն կարող է օգտակար լինել մեդիադաշտի գործունեության բազում շերտերի ուսումնասիրությունների համար: Աշխատանքն արված է գիտական բարեխղճությամբ, նյութի հստակ իմացությամբ, մասնագիտական գրականության լայն օգտագործմամբ:

Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջները, ուստի միջնորդում ենք Մասնագիտական խորհրդին Լիանա Ներսեսի Մարտիրոսյանին շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան Ժ.01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Լրագրության ամբիոնի 15.05.2025 թ. նիստում (արձանագրություն թիվ 10), որին մասնակցել են Կուլտուրայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ. Թադևոսյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Մարտիրոսյանը, Լրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ. Գալստյանը, մանկ. գ.թ., պրոֆեսոր Ա. Բաղդասարյանը, արվեստագիտության թեկնածուներ Ա. Աբրահամյանը, Ա. Առաքելյանը, պրոֆեսորներ Հ. Ավետիքյանը, Ա. Երզնկյանը, դասախոսներ՝ դոցենտի պաշտ. Կ. Քոչարյանը, Գ. Նալբանդյանը:

Հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
Լրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պաշտ. Լ. Գալստյան

Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
գիտական քարտուղար, մանկ.գ.թ., դոցենտ Մ. Իսպիրյան

«15» «մայիսի» 2025 թ.